

**ԱՎԵՏԻՍ ԱՐԱՐՈՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1866 - 1900 ԹԹ.)**

*Գրող, մշակութային գործիչ Ավետիս Ահարոնյանը խորհրդային տարիներին հանդի-
րավի դուրս է մնացել գրականագետների ուշադրությունից: Ոչ միայն չի հրատարակվել
նրա ստեղծագործությունների բազմահատորյակը, այլև մինչև այժմ հայրենիքում չի
տպագրվել նրա ստեղծագործությունների մասին որևէ ծավալուն աշխատություն:*

*1987 թվականի կեսերին Երևանում «Նաիրի» հրատարակչությունը նախաձեռնում է
Ավետիս Ահարոնյանի «Երկերի ժողովածուի» ութհատորյակի հրատարակությունը:
Կոմպոզիցիայի և համապատասխան պայմանագիր և հայտարարվում է բաժնեգրություն: Բա-
ժանորդների քանակը հասնում է քառասունմեկ հազարի: Սակայն խորհրդային Հայաս-
տանում ծայր առած հեղափոխման հետևանքով անհնար է դառնում այդ հրատարակու-
թյան իրականացումը:*

*Մինչև Ավետիս Ահարոնյանի երկերի բազմահատորյակի լույսընծայման իրականա-
ցումը նպատակահարմար ենք համարում նրա կյանքի և գործունեության քառորդ դարի
տարեգրությունը (1866-1900թթ.) ներկայացնել ընթերցողների ուշադրությանը:*

Խ. Ե. ՍԱՄՎԵԼՅԱՆ

1 8 6 6

Հունվար 4, երեքշաբթի, Մուրմալու գավառի Իգդիրմավա գյուղ.- Ահարոնյան գեր-
դաստանում ծնվում է արու գավակ:

Հայրը՝ Առաքել Ահարոնյան:

Մայրը՝ Զարդար Ահարոնյան:

Մեկ-երկու օրից ծխատեր քահանան գյուղական եկեղեցում կատարում է կնքման ա-
րարողությունը, և նորածնին տրվում է **Ահարոն** անունը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Բոստոն, 1947, Կ. Ա, էջ 8:

1 8 7 2

Ամառ, Իգդիրմավա.- Վախճանվում է Ա. Ահարոնյանի կրտսեր եղբայրը՝ Հակոբիկը:

«Առաջին անգամ էի մահ տեսնում,- գրում է Ահարոնյանը հետագայում,- ո՛չ ցավ ու-
նեի և ո՛չ տրտմություն, մի մութ ու անթիվ ծփանք օրորում էր ինձ, աշխատելով պղտորել
իմ հոգին, ակոսներ շինել, սարսափ ցանելու համար»:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Վենետիկ, 1948, Կ. IX, էջ 31:

Տարվա երկրորդ կես, Իգդիրմավա.- Վեցամյա Ավետիսը ծանր հիվանդանում է: Ա-
պաքինման ընթացքում մայրը որոշում է Ս. Խաչի տոնի օրը կազմակերպել ուխտագնա-
ցություն դեպի Մասիսի լանջին գտնվող Ս. Հակոբի վանքը:

Նույն տեղում, էջ 36:

[Մեպտեմբեր], Իգդիրմավա.- Ավետիսի մայրը հարևանների ուղեկցությամբ կազմա-
կերպում է ուխտագնացություն: Նա Ավետիսին տանում է Մասիսի լանջին գտնվող Ս. Հա-
կոբի վանքը: Հասնելով տեղ՝ մայրը Ավետիսին խմեցնում է Ս. Հակոբի աղբյուրի ջուրը:
«Ծնողներս,- գրում է նա,- խմացրին ինձ նվիրական ջուրը և ձեռք ու ոտքս լվացին նրանով,
որ մահու ստվերը սրբվի իմ հոգուց:

Մասին ու սուրբ Հակոբը փրկեցին ինձ:
Ես ապրեցի...»:

Նույն տեղում, էջ 37, 47-48:

1 8 7 3

Իգդիրմավա. - Յոթնամյա Ահարոնյանը մոր՝ Զարդարի օգնությամբ դառնում է գրա-
նանաչ և սկսում է կարդալ սովորել:

«Ես արդեն յոթ տարեկան էի, - գրում է Ահարոնյանը, - ու մի օր երեկոյան հայրս, տուն
գալով, մի փոքրիկ գիրք բերեց: Քերականություն էր: Այ հիմա դու էլ կկարդաս, - ասում է
մայրը, - խոսում ժպիտով, ես քեզ դաս կտամ, հետո դու այն մեծ գիրքը կկարդաս... Մի ամ-
բողջ տարի տևեց այբբենարան-քերական կարդալը...»:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Վենետիկ, հ. IX, էջ 50:

1 8 7 4

[Հունվար - ապրիլ], Իգդիրմավա. - Ահարոնյանը շարունակում է իր ուսումնառություն-
ը մոր օգնությամբ: «... Ութ տարեկան, - գրում է նա, - արդեն քերականը կարդում էի գիր-
կապ, մորս առջև ծնկաչոք, առանց ոչինչ հասկանալու: Մայրս բախտավոր էր, ես շնորհք
էի ցույց տալիս. հայրս երեկոյան տուն դարձին մտնում էր իր սովորական տեղը և մեզ նա-
յում էր սքանչացունով»:

Նույն տեղում, էջ 51:

[Մայիս], Իգդիր. - Ահարոնյանը իր ուսումնառությունը շարունակում է Իգդիր քաղա-
քում՝ Գյուլագիզ խալիֆայի դպրոցում:

«... Ծնողներս, գլխավորապես մայրս, - գրում է Ահարոնյանը, - վճռեց, որ ժամանակը
հասունացել է՝ ինձ Գյուլագիզ Խալիֆայի դպրոցում ուսումնա շարունակելու համար»:

«Ու մի օր մայրս և ես՝ թևս տակ մի նոր Սաղմոսագիրք դրած, Իգդիրմավա գյուղից
ճամփա ընկանք դեպի Իգդիր, ուր Խալիֆան էր: Երկու-երեք կիլոմետր պիտի քայլեինք:
Գնում էի, բայց մեծ երկյուղով ու անհանգստությամբ: Ո՞վ գիտե ինչ սարսափելի մարդ է
այդ Գյուլագիզ Խալիֆան. լսել էի, որ ֆալսիկա ունի. անծանոթ էի պատժի այդ գործի-
քին, բայց գիտեի, որ դրանով տանջում են աշակերտներին»:

Մի ամբողջ տարի Ահարոնյանը սովորում է Գյուլագիզ խալիֆայի դպրոցում. «Մեր
զբաղմունքները երկու էին՝ ընթերցանություն գրաբար գրքերի և գրություն. վերջինս ար-
տագրություն էր. օրինակը Խալիֆան էր տալիս ու մենք արտագրում էինք բարևագիր ու
մուրհակ: Ուսման պսակն էր վարժ կարդալ Ժամագիրք, Սաղմոս, Նարեկացի ու Հայսմա-
վուրք ու առանց օրինակի կազմել բարևագիր ու մուրհակ»:

«Խալիֆայի մոտ Սաղմոսը վերջացրի: Կարող էի Ավետարան կարդալ: Գրում էի
բարևագիր ու մուրհակ: Ծնողներս բավական համարեցին ու վճռեցին, որ ես թողնեմ Խա-
լիֆայի դպրոցը, ուր ոչինչ, ոչինչ չհասկացա գրքերի իմաստությունից»:

Նույն տեղում, էջ 55, 57:

1 8 7 5

Տարվա սկիզբ, Իգդիրմավա. - Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ IV -ի կոնդակի զո-
րությամբ դպրոց է բացվում նաև Սուրմալու գավառի Իգդիրմավա գյուղաքաղաքում: Այս-
տեղ դասատու է կարգվում Նշան վարժապետ Հովհաննիսյանը, որի դպրոցում իր ուսում-
նառությունը շարունակում է նաև ինձնայն Ավետիսը:

«... Մեր դասատուն, - գրում է Ահարոնյանը, - Խալիֆա չէր, այլ գրագետ, եռանդուն մի
երիտասարդ՝ իրապես վարժապետ գեթ այն ժամանակի համար: ... Ծեծը կար դարձյալ,
բայց՝ քանոնով ու ապտակով, նույնպես խիստ մարդ էր, բայց սովորեցնում էր կարդալ և
թարգմանել Ավետարանը... գրում էինք ավելի հասկանալի կտորներ ու աշխարհաբար,
վերջապես սովորում էինք թվաբանություն:

... Առաջադիմությունը արագ եղավ ու ահագին: Շատ վարժ կարդում էի Ավետա-
րանն ու թարգմանում»:

Այս դպրոցում սովորելու ժամանակ մի օր Ահարոնյանին է մոտենում նրա ավագ ընկեր Նիկողան և գաղտնիության պայմաններում Ավետիսին է հանձնում արգելքի տակ գտնվող Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը:

Ահարոնյանը անգիր է անում այդ բանաստեղծությունը: Կարդալուց հետո նա գրում է. «... այժմ հասկացա, որ կարդալ գիտեմ, գրերի գաղտնիքը գիտեմ»:

«Նալբանդյանի հզոր շնչին են պարտական,- գրում է նա,- էությունս փոթորկաղ հրայրքը»:

Նույն տեղում, էջ 58, 59, 61:

1 8 7 6

Տարվա սկիզբ, Իգդիր . - Նշան Հովհաննիսյանի դպրոցում մեկ տարի սովորելուց հետո մայրը տասնամյա Ավետիսին փոխադրում է Իգդիրի ծխական դպրոց:

Նույն տեղում:

1 8 7 7

Հունվար [հունիս], Իգդիր . - Տասնմեկամյա Ավետիսը սովորում էր Իգդիրի ծխական դպրոցում:

Նույն տեղում:

Հուլիս-օգոստոս, Սուրմալու . - Քուրդ հրոսակախմբերը իջնելով Բարդուղյան լեռներից, ասպատակում են Սուրմալուի հայաբնակ գյուղերը: Կոտորածն ու ավարատությունը ստիպում են ժողովրդին լքել հայրենի տունը և ապաստան որոնել Արաքսի մյուս ափին:

Էջմիածին է գաղթում Ահարոնյան ընտանիքը: Նրանք բնակություն են հաստատում Հայ թաղ գյուղում, ուր ապրում են 5-6 ամիս:

Նույն տեղում, էջ 191-194:

1 8 7 8

Փետրվար [մայիս], Հայ թաղ . - Ահարոնյան ընտանիքը ռուս-թուրքական պատերազմից հետո վերադառնում է Իգդիրնավա:

Նույն տեղում, էջ 194, 204:

Մայիս-հունիս, Իգդիր . - Պատերազմից հետո Իգդիր է գալիս Դավիթ Քալանթարյանը և ստանձնում է տեղի ծխական դպրոցի տեսուչի պարտականությունը:

Նույն տեղում, էջ 336-337:

[Օգոստոս-սեպտեմբեր], Իգդիրնավա . - Վախճանվում է Ավետիսի հայրը՝ դարբին Առաքելը: Ավետիսը թողնում է սովորելը:

Նույն տեղում, էջ 211-219:

Ուշ աշուն, Իգդիր . - Դպրոցի տեսուչ Դավիթ Քալանթարյանը փողոցում հանդիպում է Ավետիսին և առաջարկում է հաճախել դպրոց և մասնակցել դասերին:

Նույն տեղում, էջ 329:

1 8 8 1

Հունիս, Իգդիր . - Հաջողությամբ հանձնելով քննություններ՝ Ավետիսը «առաջնակարգ մրցանիշով» ավարտում է դպրոցը:

Նույն տեղում, էջ 361:

Հունիս վերջ, Իգդիր . - Դպրոցի տեսուչ Դավիթ Քալանթարյանը, ազատվելով տեսուչի պարտականությունից, հեռանում է Իգդիրից:

չի պարտականությունից, Էջմիածնով պետք է մեկնե՞ր արտասահման: Քալանթարյանը իր հետ Էջմիածին է տանում նաև շրջանավարտ Ավետիսին:

Նույն տեղում, էջ 361-362:

Հաջորդ օրը, Էջմիածին . - Քալանթարյանը Ահարոնյանին ներկայացնում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ Անդրեաս եպիսկոպոսին. «...Այս տղան,- ասում է Քալանթարյանը,- մեր դպրոցի լավագույն աշակերտն է, թե իբրև կարողություն և թե իբրև վարք ու բարք...»:

Նույն տեղում, էջ 367:

Սեպտեմբերի 1, Էջմիածին. - Ավետիսը եղբոր հետ Սուրմալուից հասնում է Էջմիածին, մասնակցում է ընդունելության քննությանը: Հաջողությամբ հանձնում է քննությունը և ընդունվում է Գևորգյան ճեմարան իբրև գիշերօթիկի սան:

Նույն տեղում, էջ 389-399:

Սեպտեմբեր 15, Էջմիածին. - Ահարոնյանը համարվում է ճեմարանի աշակերտ: «Ընկալեալ եղև երկրորդ դասարան»:

«Ազգային արխիվ, ֆոնդ 312, ցուցակ 2, գործ 69»:

1 8 8 3

Տարվա սկիզբ, Էջմիածին. - Ահարոնյանը հեռացվում է ճեմարանից:

Նույն տեղում:

Օգոստոս 24, Էջմիածին. - Ահարոնյանը դիմում է ճեմարանի տեսչությանը և խընդրում է իրեն վերականգնել:

Նույն տեղում:

[**Սեպտեմբեր**], **Էջմիածին** - Ճեմարանում վերականգնվում է Ահարոնյանի աշակերտական իրավունքը, և նա ավարտում է առաջին դասարանի 6-ամսյա դասընթացը:

Ճեմարանից դուրս է մնում աչքերի տկարության պատճառով:

Նույն տեղում, գործ 83:

1 8 8 5

Դեկտեմբեր, Էջմիածին. - Ճեմարանի ուսուցչական ժողովում տեղի է ունենում № 248-րդ նիստը, որի որոշմամբ Ահարոնյանը նորից ընդունվում է ճեմարան և ավարտում է՝ ստանալով № 302 վկայագիրը:

Նույն տեղում, ցուցակ 1, գործ 122:

1 8 8 6

Սեպտեմբեր - հոկտեմբեր, Էջմիածին. - Աչքերի տկարության պատճառով Ահարոնյանը ստիպված է լինում հրաժարվել ճեմարանի լսարանական բաժնում իր կրթությունը շարունակելու մտքից և վերադառնում է Իգդիրնսկա:

Նույն տեղում, էջ 454-455:

1 8 8 7

Ապրիլ 8, Իգդիրնսկա. - Ա. Ահարոնյանը Թիֆլիսի «Արձագանք» պարբերականին է ուղարկում իր առաջին հոդված-թղթակցությունը:

«Արձագանք», 1887, ապրիլ 26, № 4, էջ 212:

Մայիս, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում տպագրվում է Ա. Ահարոնյանի «Նամակ Իգդիրից» հոդվածը:

«Արձագանք», 1887, 24 մայիսի, № 18, էջ 268:

Մայիսի 29, Էջմիածին. - Ահարոնյանը դիմում է ճեմարանի տեսչությանը և խնդրում է թույլ տալ իրեն շարունակելու ուսումնառությունը, քանի որ իր աչքերը բուժվել են:

Սերժ Մրապիոնյան, Ավետիս Ահարոնյան,
«Նշանավոր ճեմարանականներ», Էջմիածին, 2005, էջ 172:

Հունիս 9, Էջմիածին. - Ծեմարանում հարգվում է Ա. Ահարոնյանի խնդրանքը, սակայն նա չի շարունակում իր կրթությունը լսարանական բաժնում:

Նույն տեղում:

Օգոստոս 16, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությանը լույս է տեսնում Ահարոնյանի «Նամակ Մուրմալուից» վերնագրով հոդվածը:

«Արձագանք», 1887, 16 օգոստոսի, № 30, էջ 490:

Օգոստոս, Էջմիածին. - Գևորգյան հոգևոր ճեմարանի տնօրինությունն Իգդիրնավայից Ահարոնյանին հրավիրում է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում վարելու վերակացուի պաշտոնը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 30:

Աշուն, Էջմիածին. - Ահարոնյանը Գևորգյան ճեմարանում անցնում է աշխատանքի որպես վերակացու:

Նույն տեղում:

Աշուն, Իգդիրնավա. - Քսաննեկանյա Ավետիսը ամուսնանում է իրենց հարևան Նազարենց գերդաստանի դուստր Անուշի հետ:

Նույն տեղում, էջ 28:

1888

Մայիս, Էջմիածին. - Ահարոնյանն ազատվում է Գևորգյան ճեմարանի վերակացուի պաշտոնից և մեկնում է Իգդիր:

Նույն տեղում, էջ 30:

Հունիս 12, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությանը լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Նամակ Իգդիրից» խորագրով հոդվածը:

«Արձագանք», 1888, № 22, էջ 310:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Բոստոն, 1948, հ. Գ, էջ 5-21:

Հունիս - հուլիս. - Մի կարճ ժամանակամիջոց Ա. Ահարոնյանը լինում է Մոսկվայում: Այնտեղից նա Ա. Ա. ստորագրությանը հունիսի 6-ին Թիֆլիսի «Արձագանք» պարբերականին է ուղարկում «Նամակ Մոսկվայից» վերնագրով թղթակցությունը:

«Արձագանք», 1888, № 26, էջ 365-366:

Հուլիս 3, Մոսկվա. - Լազարյան ճեմարանի դահլիճում տեղի է ունենում Մոսկվայի ծխականների ընդհանուր վիճահարույց ժողովը, որին ներկա է լինում նաև Ա. Ահարոնյանը:

«Արձագանք», 1888, 17 հուլիսի, № 27, էջ 377-378:

Հուլիս 10, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությանը տպագրվում է Ահարոնյանի «Գյուղացի մանկան ընտանեկան կրթությունը» վերնագրով հոդվածը:

«Արձագանք», 1888, № 26, էջ 365-366:

Հուլիս 17, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությանը լույս է տեսնում Ահարոնյանի Մոսկվայից ուղարկած «Նամակ Մոսկվայից» վերնագրով թղթակցությունը:

«Արձագանք», 1888, № 27, 17 հուլիսի, էջ 377-378:

Օգոստոս 14, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությամբ լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Հայ գյուղացու աղջիկը» վերնագրով հոդվածը:

«Արձագանք», 1888, 14 օգոստոսի, № 31, էջ 427-428:

Սեպտեմբեր 27, Թիֆլիս. - «Արձագանք» պարբերականում Ա. Ա. ստորագրությամբ լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Բարոյականությունը գյուղում» վերնագրով հոդվածը:

«Արձագանք», 1888, 27 սեպտեմբերի, № 37, էջ 509-510:

Սեպտեմբեր, Իգդիր. - Տեղի ծխական երկրասյա արական դպրոցում Ա. Ահարոնյանը վարում է հայոց լեզվի և գրականության պատմության ուսուցչի պաշտոնը: Այս պարտականությունը նա կատարում է մինչև 1892 թվականի մայիս ամիսը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 30:

Ս. Կ. Խոսրոյան, Արևմտահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 251-252:

1889

Հունվար, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրի հերթական համարում Ա. ստորագրությամբ տպագրվում են Ա. Ահարոնյանի գրախոսականները՝ նվիրված Ս. Քամայանի «Շովինար» վերնագրով հեքիաթին և Շեքսպիրի «Չուր տեղը մեծ աղմուկ» կատակերգությանը՝ տպագրված Թիֆլիսում 1888 թ.:

«Մուրճ», Թիֆլիս, 1889, № 1, էջ 164-166, 168-169:

Հունիս, Թիֆլիս. - «Մուրճ» պարբերականի հերթական համարում Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված Շեքսպիրի «Համլետին» (թարգմանությունը՝ Սենեքերիմ Արծրունու):

«Մուրճ», Թիֆլիս, 1889, № 6, էջ 922-936:

Օգոստոս, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրի հերթական համարում, Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված «Թասիթ» խորագրով աշխատությանը, տպագրված Թիֆլիսում 1889թ.:

«Մուրճ», Թիֆլիս, 1889, № 8, էջ 1225-1226:

Նոյեմբեր, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրի հերթական համարում Ա. Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված Շեքսպիրի անճին:

«Մուրճ», Թիֆլիս, 1889, № 11, էջ 1824-1825:

1890

Հունվար, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրի հերթական համարում Ա. Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված Ե. Մադաթյանի «Փավստոս Բյուզանդ» վերնագրով աշխատությանը՝ տպագրված Վիեննայում 1890 թ.:

«Մուրճ», Թիֆլիս, 1890, № 1, էջ 106-108:

Փետրվար, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրում Ա. Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված «Արևելյան վիպաշխարհ» վերնագրով աշխատությանը (տպագրված Թիֆլիսում 1889 թ.):

«Մուրճ», Թիֆլիս, 1890, № 2, էջ 276-281:

Սեպտեմբեր, Թիֆլիս. - «Մուրճ» պարբերականի հերթական համարում Ա. Ա. ստորագրությամբ տպագրվում է Ա. Ահարոնյանի «Գրախոսականը»՝ նվիրված Ս. Պալասանյանի «Պատմություն հայոց. սկզբից մինչև մեր օրերը» (Թիֆլիս, 1890 թ.) վերնագրով գրքին:

«Մուրճ», Թիֆլիս, 1890, № 9, էջ 1316-1318:

Տարվա ընթացքում. - Ա. Ահարոնյանը գրում է «Արյունոտ քթսմոր» վերնագրով պատմվածքը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Բոստոն, 1948, հ. Ե, էջ 54-62:

1 8 9 1

Ամառ, Իգդիր. - Ճամփորդելիս Շիրվանգաղեն Իգդիրում խեղդվելուց փրկում է Ա. Ահարոնյանի որդուն՝ եռամյա Վարդգեսին: Ահարոնյան ընտանիքում տեղի է ունենում հյուրընկալություն, որին մասնակցում են Շիրվանգաղեն և Ահարոնյանի մանկավարժ ընկերները:

Շիրվանգաղե, Երկերի ժողովածու, Եր., 1961, հ. 8, էջ 171-172:

1 8 9 2

Հունիս-օգոստոս, Նոր Բայազետ. - Ա. Ահարոնյանը պաշտոնական հրավեր է ստանում Նոր Բայազետի տղայոց երկդասյա դպրոցից՝ իբրև մանկավարժ պաշտոնավարելու:

ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 56, ց. 1, գործ 279, ք. 5:

Օգոստոս, երկրորդ կես, Իգդիր-Նոր Բայազետ. - Ա. Ահարոնյանը թողնում է Իգդիրի դպրոցում ուսուցչի պաշտոնը և մեկնում է Նոր Բայազետ՝ տեղի երկդասյա դպրոցում իբրև մանկավարժ աշխատելու համար:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 30:

Մեպտեմբեր-դեկտեմբեր, Նոր Բայազետ. - Ա. Ահարոնյանը Նոր Բայազետի դպրոցում երկրորդ կիսամյակի սկզբից տարեկան 600ռ. աշխատավարձով մինչև 1893 թ. հունիսը պաշտոնավարում է որպես հայոց լեզվի և քննադատության դասատու:

ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 56, ց. 1, գործ 279, ք. 5:

1 8 9 3

Փետրվարի 7, Թիֆլիս. - «Տարագ» շաբաթաթերթում մարտից մինչև հոկտեմբեր սկսում է տպագրվել Ա. Ահարոնյանի «Մուրմալուի հոռները» («Նյութեր մեր ժողովրդական կյանքի ուսումնասիրության համար») վերնագրով աշխատությունը:

«Տարագ», Թիֆլիս, 1893, № № 6, 12, 13, 19, 20, 24, 25, 32, 35, 39, 40:

Փետրվարի 28, Թիֆլիս. - «Տարագ» շաբաթաթերթի հերթական համարում լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Կանանց ստախտության մասին» վերնագրով հոդվածը:

«Տարագ», 1893, 28 փետրվարի, № 9, էջ 130:

Հուլիսի 25, Թիֆլիս. - «Տարագ» շաբաթաթերթի հերթական համարում «Կոան» ծածկանունով լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Տպավորություններ Իգդիրի կյանքից» հոդվածը:

«Տարագ», 1893, հուլիս, № 28, էջ 442-444:

Օգոստոս 15, Թիֆլիս. - «Տարագ» շաբաթաթերթի հերթական համարում «Կոան» ծածկանունով լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Պ. Կարա-Մուրզան Իգդիրում» հոդվածը:

Նույն տեղում, № 31, էջ 495-496:

Մեպտեմբեր-դեկտեմբեր, Իգդիր. - Ա. Ահարոնյանը ավագ ուսուցչի պաշտոնով աշխատում է տեղի ծխական դպրոցում:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 30-31:

1 8 9 4

Փետրվար 25, Վաղարշապատ. - Տեղի է ունենում Շիլլերի «Ավազակներ» դրամայի ներկայացումը: Ա. Ահարոնյանը գրում և «Տարագի» խմբագրությանն է ներկայացնում

«Շիրերի «Ավագակներ» ներկայացունը Վաղարշապատում» վերնագրով հոդվածը:

«Տարագ», 1894, 13 մարտի, № 9, էջ 135-136:

1895

Հուլիս, Թիֆլիս . - «Մշակ» լրագրի հերթական համարներում Ա. Ահարոնյանը Ա.Ա. ստորագրությամբ հուլիսի 1-ին, հուլիսի 15-ին, օգոստոսի 8-ին, օգոստոսի 31-ին և նոյեմբերի 2-ին հրատարակում է «Լուրեր սահմանի մյուս կողմից» վերնագրով թղթակցությունները:

«Մշակ», Թիֆլիս, 1895, № 75, 80, 89, 99 և 126:

Իգդիր . - Երևանի քաղաքային ոստիկանությունը խուզարկում է Ա. Ահարոնյանի բնակարանը, թեև չի հայտնաբերվում որևէ կասկածելի փաստ, սակայն նրան առնում են ոստիկանության հսկողության տակ, որը տևում է մինչև 1898 թ. սկիզբը: Այդ ընթացքում նա իրավունք չունի բացակայելու քաղաքից:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ե, էջ 331:

1896

Տարվա սկիզբ, Իգդիր . - Կովկասյան կառավարչապետի հրահանգով փակվում է Իգդիրի երկսեռ ծխական դպրոցը:

Ա. Ահարոնյանը մնում է գործազուրկ:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 30:

Թիֆլիս . - «Մշակ» լրագրի հերթական համարներում Ա. Ահարոնյանը Ա.Ա. ստորագրությամբ հրատարակում է մի շարք թղթակցություններ և «Պուտ մը կաք» և «Ճալագ Վուրդունի» վերնագրերով պատմվածքները:

«Մշակ», Թիֆլիս, 1896, № 14, 37, 70, 94, 96, 113, 139 և 140:

1897

Մարտ, Թիֆլիս . - «Մշակ» լրագրի հերթական համարում տպագրվում է Ա. Ահարոնյանի «Փշուր ըմ խաց» ստեղծագործությունը:

«Մշակ», 1897, 5 մարտի, № 31:

Ապրիլ-մայիս, Թիֆլիս . - Հայոց հրատարակչական ընկերության նախածեղծությանը լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Հող կինը» («Նյութեր մեր ժողովրդական կյանքի ուսումնասիրության համար») խորագրով աշխատությունը առանձին գրքով:

Թիֆլիս, 1897, 158 էջ:

Մայիս-հունիս, Թիֆլիս . - «Մշակ» լրագրի հերթական համարում լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Արցունքը զուլում կծնի» և «Խաթունիս սիրուն» վերնագրերով ստեղծագործությունները:

«Մշակ», 1897, մայիս 31, № 67, հունիս 21, № 725:

Մոսկվա . - “Братская помощь” հրատարակչությունը Կարա-Մուրզայի քարզմանությանը ռուսերեն լույս է ընծայում Ա. Ահարոնյանի “Фелар Вургуни” ստեղծագործությունը:

“Братская помощь”, М., 1897, с. XXXIV – XLI

Թիֆլիս . - «Ազգագրական հանդես» պարբերականի հերթական համարում տպագրվում է Ա. Ահարոնյանի «Մուրմալուի ժողովրդական երգերը» խորագրով հավաքածուն:

«Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ տարի, գիրք Բ, էջ 321-347:

Մայիս-հունիսի սկիզբ, Թիֆլիս. - Բաքվի գրքասերների մի խմբի օժանդակությամբ Ա. Ահարոնյանը պատրաստվում է մեկնել Շվեյցարիա՝ համալսարանական կրթություն ստանալու:

Ուղևորության ընթացքում Թիֆլիսում նա ծանոթանում է դաշնակցության հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանի ու Միմոն Ջավայրյանի հետ:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 35:

Հունիս, Բաթում. - Ծովային երթուղով Բաթումից սկսվում է Ա. Ահարոնյանի ուղևորությունը դեպի Լոզան: Հունիսի 16-ին նա լինում է Սամսոն քաղաքում:

«Մշակ», 1898, 30 հունիսի, № 134, էջ 1-2:

Հունիսի վերջ, Շվեյցարիա. - Ա. Ահարոնյանը հասնում է Լոզան և պատրաստվում է իրականացնել համալսարան ընդունվելու գործերը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ե, էջ 331:

Հուլիս-օգոստոս, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում լույս են տեսնում Ա. Ահարոնյանի «Ծովի վրա» խորագրով թղթակցությունները՝ նվիրված ուղևորության ընթացքում իր ստացած տպավորություններին:

Հուլիսի 18-ին նա լինում է Բոսֆորում:

«Մշակ», 1898, 30 հուլիսի, № 134, 5 օգոստոսի, № 138:

Հունիս-հուլիս, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում իրականացվում է Ա. Ահարոնյանի «Բաշուն» վերնագրով ստեղծագործության տպագրությունը:

«Մշակ», 1898, 5 հունիսի, № 96, 7 հունիսի, № 97, 9 հունիսի, № 98:

Օգոստոս-սեպտեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում տպագրվում է Ա. Ահարոնյանի «Ռաշիդը» խորագրով վիպակը:

«Մշակ», 1898, № 147, 148, 150, 153, 154, 155, 161, 164:

Սեպտեմբերի սկիզբ, Շվեյցարիա. - Ա. Ահարոնյանը սկսում է ապրել Լոզանի համալսարանի պատմափիլիսոփայական քաժնում:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 35:

Սեպտեմբեր 25, Լոզան. - Ա. Ահարոնյանը այցելում է Լոզանում քացված կենդանիների ցուցահանդեսը և ստացած տպավորությունների մասին հաղորդում է տեղեկություններ իր թղթակցությունների մեջ:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Գ, էջ 198:

Սեպտեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» պարբերականի հերթական համարում լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Երկու սեր» վերնագրով պատմվածքը:

«Մշակ», 1898, 27 սեպտեմբերի, № 175, էջ 1-2:

Հոկտեմբեր-նոյեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Չնդանում» խորագրով ստեղծագործությունը:

«Մշակ», 1898, 17 հոկտեմբերի, № 189, 21 հոկտեմբերի, № 191, 5 նոյեմբերի, № 201:

Աշուն, Լոզան. - Հաստատվելով Ժնևում՝ «Դրոշակ» պարբերականի խմբագիր Քրիստափոր Միքայելյանը մեկնում է Լոզան և հանդիպում է Ա. Ահարոնյանին: Նա Ահարոնյանին առաջարկում է թղթակցել «Դրոշակ» պարբերականին, տալիս է գործնական հանձնարարություններ, «պարտադրում է» փոքրիկ պատկերներ գրել «Դրոշակի» հա-

մար: Խմորվում է «Խայր» պատմվածքի հղացումը:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 35:

Նոյեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում հաջողաբար լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Հարևանները» խորագրով ակնարկը:

«Մշակ», 1898, 13 նոյեմբերի, № 204, 17 նոյեմբերի, № 209:

Դեկտեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում հաջողաբար տպագրվում են Ա. Ահարոնյանի «Իմ տպավորություններից» խորագրով թղթակցությունները:

«Մշակ», 1898, 5 դեկտեմբերի, № 223, 9 դեկտեմբերի, № 225, 16 դեկտեմբերի, № 230:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Գ, էջ 181-199:

Դեկտեմբեր, Լոգան. - Ա. Ահարոնյանն ավարտում է «Խայր» պատմվածքի գրությունը և ուղարկում է ԺՆՆ՝ «Դրոշակի» խմբագրին:

Ա. Ահարոնյան, «Ազատության ճանապարհին», Թիֆլիս, 1906, էջ 24:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ե, էջ 332:

1899

Փետրվար 28, Ըվեյցարիա, ԺՆՆ. - «Դրոշակ» պարբերականում **Ղարիբ ծածկանունով** լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Խայր» վերնագրով պատմվածքը:

«Դրոշակ», ԺՆՆ, 1899, 28 փետրվարի, № 2, էջ 28-32:

Փետրվար, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում **Ղարիբ ծածկանունով** լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Ոճրագործը» պատմվածքը:

«Մշակ», 1899, 11 փետրվարի, № 26, 19 փետրվարի, № 32, 23 փետրվարի, № 34:

Ապրիլ, ԺՆՆ. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարում **Ղարիբ ծածկանունով** լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Պատիվը» թղթակցությունը:

«Դրոշակ», 1899, 30 ապրիլի, № 4, էջ 62:

Հունիս, Թիֆլիս. - Լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Բաշոն» գրքույկը:

Թիֆլիս, 1899, 40 էջ:

Փետրվար-հունիս, ԺՆՆ. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարներում Ա. Ահարոնյանը հրատարակում է «Խայր», «Պատիվ» և «Էլ մի աղոթիր» պատմվածքները:

«Դրոշակ», ԺՆՆ, 1899, 28 փետրվարի, № 2, 30 ապրիլի, № 4, 21 հունիսի, № 65:

Ապրիլ, Ըվեյցարիա. - Լոգանի համալսարանում սկսվում են արձակուրդները. ուսանող Ա. Ահարոնյանը մեկնում է Իտալիա՝ շրջագայության: Լինում է Վենետիկում, այցելում է Մխիթարյան միաբանություն: Վերադարձին անցնում է Փարիզով:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 33-38:

Հունիս, Թիֆլիս. - «Մշակ» պարբերականի հերթական համարում լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Պատկերներ» խորագրով թղթակցությունը:

«Մշակ», 1899, 17 հունիսի, № 109:

Հունիս, ԺՆՆ. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարում **Ղարիբ ծածկանունով** լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Էլ մի աղոթիր» վերնագրով պատմվածքը:

«Դրոշակ», ԺՆՆ, 1899, № 6, էջ 92-96:

Հունիս-հուլիս, Թիֆլիս. - Հայոց հրատարակչական ընկերության պատվերով Ա. Ա. հարոնյանը ռուսերենից հայերեն թարգմանությամբ լույս է ընծայում լեհ գրող Էլիզա Օ-ժեկոյի (1841-1910) «Հզոր Սամսոն» և «Դժգույն հովվերգություն» խորագրով աշխատությունները:

Թիֆլիս, 1899, էջ 94, 152:

Հուլիս, Թիֆլիս. - Ա. Ա. հարոնյանը «Մշակ» լրագրի հերթական համարներում «Նամակ Ֆրանսիայից» վերնագրով հրատարակում է մի շարք թղթակցություններ:

«Մշակ», 1899, 21 հուլիսի, № 133, 22 հուլիսի, № 134, 24 հուլիսի, № 135, 28 հուլիսի, № 136:

Օգոստոս, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարում Ա. Ա. հարոնյանը լույս է ընծայում «Աքաղաղը» վերնագրով պատմվածքը:

«Մշակ», 1899, 20 օգոստոսի, № 152:

Օգոստոս-դեկտեմբեր, Ժնև. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարներում Ա. Ա. հարոնյանը Ղարիբ ստորագրությամբ հրատարակում է «Մայրը» պատմվածքը, ինչպես նաև «Ազատության ճանապարհին» ընդհանուր խորագրի ներքո «Բանտապետը» և «Ընկերը» վերնագրերով ստեղծագործությունները:

«Դրոշակ», 1899, օգոստոս, № 7, էջ 110-112, դեկտեմբեր, № 10, էջ 157-158 և 159-160:

1900

Հունվար-մարտ, Թիֆլիս. - «Մուրճ» ամսագրի հերթական համարում տպագրվում է Ա. Ա. հարոնյանի «Ուշացած սեր» պատմվածքը և «Ամհավատը» վիպակը:

«Մուրճ», 1901, հունվար, № 1, էջ 73-95, մարտ, № 3, էջ 5-55:

Հունվար-մայիս, Եվեյցարիա, Ժնև. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարում Ղարիբ ծածկանունով հաջորդաբար հրատարակվում են Ա. Ա. հարոնյանի «Հայդուկի նոր տարին», «Արյունոտ թթխմոր» և «Ջավոն» վերնագրերով պատմվածքները:

«Դրոշակ», Ժնև, 1900, հունվար, № 1, էջ 6-7, էջ 14-16, մայիս № 4, էջ 61-64:

Փետրվար-մայիս, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարներում հաջորդաբար հրատարակվում են Ա. Ա. հարոնյանի «Արձանի մոտ», «Նամակ Փարիզից», «Ցավը» և «Նամակ Ֆրանսիայից» վերնագրերով գործերը:

«Մշակ», Թիֆլիս, 1900, 5 փետրվարի, № 23, 6 ապրիլի, № 65, 6 մայիսի, № 83,

11 մայիսի, № 86, 12 մայիսի - 16 մայիսի, № 87-89:

Մայիս, Եվեյցարիա. - Ա. Ա. հարոնյանը պատմափիլիսոփայական դոկտորի աստիճանով ավարտում է Լոզանի համալսարանը և շրջագայելու նպատակով մեկնում է Իտալիա: Լինում է Ջենովայում, Պիզայում, Հռոմում, Պանթեոնում, Վատիկանում, Պոմպեյում, Ֆլորենցիայում, Միլանում:

Վերադարձին անցնում է Փարիզ:

Ա. Ա. հարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 38:

Մայիս, Թիֆլիս. - “Кавказский вестник” պարբերականում լույս է տեսնում Ա. Ա. հարոնյանի «Երկու սեր» պատմվածքի ռուսերեն թարգմանությունը:

“Кавказский вестник”, Թիֆլիս, 1900, № 5:

Մայիս-հունիս, Մոսկվա. - Վարվառե Զանանյանի նյութական օժանդակությամբ լույս է տեսնում Ա. Ա. հարոնյանի «Պատկերներ» գրքույկը:

Գրքույկի մեջ ներառված են «Հարևաններ», «Ռաշխը», «Բախտի խաղեր», «Աքաղաղը», «Նորածինը», «Ֆալագ Վուրդունի», «Պոտ ըմ կաթ», «Փշուր ըմ խաց», «Բաշոն» և «Ջնդանում» պատմվածքները:

Ա. Ա. հարոնյան, Պատկերներ (Վերջին տարիների տաճկահայոց կյանքից), Մոսկվա, 1900, 338 էջ:

Հունվար, Փարիզ. - «Անահիտ» ամսագրի խմբագիր Արշակ Չոպանյանը պատասխան հոդված է հրատարակում Ա. Ահարոնյանի դեմ «Մշակ» լրագրում նրա հրատարակած «Նամակ Ֆրանսիայից» («Մշակ», 1900, № 113) հոդվածի առիթով:

«Անահիտ», Փարիզ, 1900, Բ տարի, № 68, էջ 178:

Հունիս-հուլիս, Փարիզ. - Ա. Ահարոնյանը իբրև «Մշակ» լրագրի թղթակից մասնակցում է Փարիզում քացված «Համաշխարհային ցուցահանդեսին»:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ե, 338 էջ:

Հունիս-հոկտեմբեր, Թիֆլիս. - «Մշակ» լրագրի հերթական համարում հաջորդաբար հրատարակվում են Ա. Ահարոնյանի «Նամակ Ֆրանսիայից» վերնագրով քննադատական թղթակցությունը (նվիրված Արշակ Չոպանյանի Փարիզում կազմակերպած ցերեկույթին) և «Մարդագեղը» վիպակը:

«Մշակ», Թիֆլիս, 1900, 21 հունիսի, № 113, 19 հոկտեմբերի, № 197, 20 հոկտեմբերի, № 198, 21 հոկտեմբերի, № 199, 24 հոկտեմբերի, № 200:

Օգոստոս-դեկտեմբեր, Եվեյցարիա, Ժճև. - «Դրոշակ» պարբերականի հերթական համարներում Ղարիբ ծածկանունով հաջորդաբար հրատարակվում են Ա. Ահարոնյանի «Աշուղը», «Կովի դաշտում» և «Տիրացու Գրիգորը» վերնագրերով պատմվածքները:

«Դրոշակ», Ժճև, 1900, օգոստոս, № 6, էջ 94-96, սեպտեմբեր, № 7, էջ 157-160:

Սեպտեմբեր, Փարիզ. - Ա. Ահարոնյանը սովորում է Սորբոնի համալսարանի գրականության բաժնում:

Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ. Ա, էջ 37:

Հոկտեմբեր 12, Ցյուրիխ. - Տեղի է ունենում Եվրոպայի հայ ուսանողության երրորդ համագումարը (տևում է 4 օր): «Հայ ընտանիքը» թեմայով բանախոսություն է կարդում Ա. Ահարոնյանը:

«Եվրոպայի հայ ուսանողության տեղեկագիր»,
Վենետիկ, ս. Ղազար, 1902, էջ 2:

Տարվա երկրորդ կես, Ժճև. - Լույս է տեսնում Ա. Ահարոնյանի «Ազատության ճամպարհին» վերնագրով աշխատության առաջին պրակը:

Ժճև, 1900: